



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՇՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 06/22**

14.04.2022թ.

ք. Երևան

Քաղաքացի Պարզն Առաքելյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 75-րդ և 78-րդ հոդվածներին այնքանով, որքանով կայուն պրակտիկա դարձած դատական մեկնաբանությամբ կամ այդ իրավանորմի այն մեկնաբանությամբ, ըստ որի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունման եղանակը չի վերաբերում այն ըստ կտակի ժառանգներին, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև ըստ օրենքի ժառանգներ և վերջիններս ըստ կտակի ժառանգությունը կարող են ընդունել բացառապես նոտարին ժառանգության ընդունման վերաբերյալ դիմում ներկայացնելով:

Դիմելով դատարան (թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործ)՝ Դիմողը հայտնել է, որ Լիան Տիգրանի Մանուկյանը մահացել է 12.09.2015թ., և սեփականության իրավունքով նրան է պատկանել ք. Երևան, Աջափնյակ համայնք, Բաշինջաղյան փ., 163 շ., 14 բն. հասցեի անշարժ գույքի 4/15 մասը, որը Լիան Մանուկյանը 08.07.2008թ. կտակի համաձայն կտակել է Պարզն Առաքելյանին: Վերոնշյալ կտակը գտնվել է Պարզն Առաքելյանի տիրապետության տակ, ով հանդիսանում է Լիան Մանուկյանի միակ որդին: Կատարելով մեջբերում ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջանի «Անուշիկ» համատիրության 21.03.2018թ. թիվ 160 տեղեկանքից, հայտնել է, որ առկա են համատիրության հանդեպ ունեցած պարտքի, ամսավճարների ընդունման 05.11.2016թ., 12.03.2018թ., 21.03.2018թ. անդորրագրեր, աղբահանության վճարումների ընդունման թիվ 356222 անդորրագիրը, որոնց համաձայն՝ վերոնշյալ բնակարանի հետ կապված վճարումները կատարել է Պարզն Առաքելյանը: Հայտնել է, որ Պարզն Առաքելյանը բնակվել է ք. Երևան, Աջափնյակ համայնք, Բաշինջաղյան փ., 163 շ., 14 բն. հասցեում, տիրապետել, կառավարել և հոգ է տարել նշած բնակարանի համար և միջոցներ է ձեռնարկել այն երրորդ անձանց ոտնձգությունից կամ հավակնություններից պաշտպանելու նպատակով, ինչպես նաև տեր է կանգնել ու տիրություն արել նշված բնակարանին:

Հայտնել է նաև, որ 11.04.2016թ. թիվ 1115 ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն՝ Լիան Տիգրանի Մանուկյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգ է համարվել Հռիփսիմե Առաքելյանը, ում սեփականության իրավունքը ք. Երևան, Աջափնյակ համայնք, Բաշինջաղյան փ., 163 շ., 14 բն. հասցեի անշարժ գույքի 4/15 մասի նկատմամբ գրանցվել է 20.04.2016թ.-ին:

Հայտնել է, որ Պարզև Առաքելյանը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում փաստացի տիրապետել է Լիան Մանուկյանի կողմից կտակված ժառանգությունը, այդ թվում՝ նաև ք. Երևան, Աջափնյակ համայնք, Բաշինջաղյան փ., 163 շ., 14 բն. հասցեի անշարժ գույքը, քանի որ ունենալով կտակն իր տիրապետության տակ՝ դրսևորել է հիշյալ կտակով ժառանգությունն ընդունելու կամահայտնություն: Որպես իրավական հիմք՝ նշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ, 1225-րդ, 1226-րդ և 1227-րդ հոդվածները և խնդրել է փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել իր մոր՝ Լիան Տիգրանի Մանուկյանի ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Հռիփսիմե Առաքելյանի անվամբ տրված 11.04.2016թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1115 վկայագիրը և դրա հիման վրա 20.04.2016թ. կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Գործով հակընդեմ հայց է ներկայացվել Հռիփսիմե Առաքելյանի կողմից, ով գործի քննության ընթացքում հրաժարվել է հայցից:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Վարդանյան) 11.09.2020 թվականի վճռով հայցը մերժվել է, հակընդդեմ հայցի մասով՝ գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021 թվականի որոշմամբ Պարզև Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի 04.08.2021 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Ընդհանուր իրավասության և վերաքննիչ քաղաքացիական դատարաններն իրենց կողմից կայացված դատական ակտերի հիմքում դրել են հետևյալ դիրքորոշումը. «Հիմք ընդունելով վերոգրյալը և ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի, և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը: Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որը պետք է ուղղված լինի հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն

Ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով: Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011թ. թիվ ԵԱՔԴ/1018/02/09 և 04.10.2013թ. թիվ ԱՐԱԴ2/0420/02/11 որոշումները):»:

Դիմողը նշում է նաև, որ ժառանգության իրավունքի գիտությանը և աշխարհի ոչ մի իրավական համակարգին և դրա պրակտիկային հայտնի չէ այնպիսի մոտեցում, որի համաձայն ըստ կտակի ժառանգության ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգի կողմից փաստացի տիրապետման կամ կառավարման հիմքով ընդունումը սահմանափակված է, նման մոտեցումը չի հետապնդում սահմանադրական նպատակ և սահմանափակում է անձի իրավունքները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 75-րդ և 78-րդ հոդվածներին այնքանով, որքանով կայուն պրակտիկա դարձած դատական մեկնաբանությամբ կամ այդ իրավանորմի այն մեկնաբանությամբ, ըստ որի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունման եղանակը չի վերաբերում այն ըստ կտակի ժառանգներին, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև ըստ օրենքի ժառանգներ և վերջիններս ըստ կտակի ժառանգությունը կարող են ընդունել բացառապես նոտարին ժառանգության ընդունման վերաբերյալ դիմում ներկայացնելով:

Վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթի սահմանադրականությունը, այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունման եղանակը չի վերաբերում այն ըստ կտակի ժառանգներին, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև ըստ օրենքի ժառանգներ և վերջիններս ըստ կտակի ժառանգությունը կարող են ընդունել բացառապես նոտարին ժառանգության ընդունման վերաբերյալ դիմում ներկայացնելով: Այլ կերպ ասած՝ եթե անձը համարվում է և՛ ըստ օրենքի ժառանգ, և՛ ըստ կտակի, ապա վերջինս ժառանգությունը կարող է ընդունել բացառապես նոտարին դիմում ներկայացնելու միջոցով, իսկ ժառանգական գույքի փաստացի տիրապետման և կառավարման փաստը չի կարող մեկնաբանվել որպես ժառանգության ընդունում (Դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերում այս մեկնաբանությունն է դրված):

Անդրադառնանք նախ սեփականության իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը: 2014 թվականի ապրիլի 02-ի ՍԴՌ-1142 որոշման համաձայն՝ «6. Հանրագումարի բերելով ասվածը և սույն հարցի շրջանակներում գնահատելով դատաքննության մասնակիցների բացատրություններն ու պարզաբանումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը փաստում է, նախ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը», որից բխում է պետության հանրային-իրավական համարժեք պարտավորությունը:

Երկրորդ՝ այդ պարտավորության իրացման նախապայմանն այն է, որ համաձայն Սահմանադրության 31-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»:

Երրորդ՝ սահմանադրական այդ իրավունքը չի կարող օրենքով սահմանափակվել, քանի որ դրա համար անհրաժեշտ հիմքեր նախատեսված չեն Սահմանադրության 31, 43 և 44-րդ հոդվածներով:

... 12. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով

են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի առավել ևս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել:»:

Սահմանադրական դատարանը 2016 թվականի մայիսի 10-ի ՍԴՈ-1271 որոշման մեջ նշել է. «7. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նշված դրույթը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ոչ միայն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, այլ նաև՝ օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը, ինչը պետությունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորվի սեփականություն ձեռք բերելու իրավունքը: Նշված իրավունքների իրականացման արդյունավետ իրավակազմակերպական կառուցակարգեր և համապատասխան ընթացակարգեր չնախատեսելու դեպքում անձին կարող է վնաս հասցվել:»:

Անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակմանը՝ Սահմանադրական դատարանը 2015 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-1189 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «5. ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցերին: Մասնավորապես, ՍԴՈ- 903, այնուհետև՝ ՍԴՈ-1073 որոշումներում դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ., 2-րդ մաս), գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ., 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու

իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Նախ, հարկ է նշել, որ վիճարկվող դրույթը ներառված է Օրենսգրքի 73-րդ գլխում, որը վերնագրված է «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ»: Նշված գլխին նախորդող 72-րդ գլուխը վերնագրված է «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ», իսկ 71-րդ գլուխը՝ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ»:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ 73-րդ գլխով նախատեսված ժառանգության ընդունման կանոնները վերաբերում են և՛ ըստ կտակի ժառանգությանը, և՛ ըստ օրենքի:

Օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝

1. ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և

2. ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեզիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44): ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Տվյալ դեպքում Օրենսգրքի համակարգային վերլուծությունից բխում է, որ ժառանգության ընդունման եղանակ է նաև ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

Այսինքն՝ Օրենսգրքով որևէ տարբերակում չկա, թե փաստացի տիրապետման հիմքով ըստ օրենքի ժառանգն է ընդունել ժառանգությունը, թե ըստ կտակի: Թե՛ ըստ օրենքի, թե՛ ըստ կտակի ժառանգների դեպքում ժառանգական գույքի փաստացի տիրապետումը և կառավարումը համարվում է ժառանգական գույքի ընդունում՝ անկախ դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումից (եթե այդպիսին պահանջվում է):

Սույն դեպքում թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործով Դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերը չեն բխում Օրենսգրքի 1225-րդ, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, հակասում են Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին, անհիմն սահմանափակել են այն անձի իրավունքները, ով ըստ Օրենսգրքի օրինական հիմքեր ունեւ ժառանգելու իրեն հասանելի գույքը, առավել ևս այն դեպքում, երբ կա կտակ, որով գույքի նախկին սեփականատերն արտահայտել է իր կամահայտնությունը գույքը Դիմողին կտակելու վերաբերյալ, որն էլ իր հերթին կտակարարի մահից հետո փաստացի տիրապետել, կառավարել և դատական գործում առկա ապացույցներով հոգ է տարել գույքի պահպանության նկատմամբ:

Ստացվում է, որ օրենսդիրը նախատեսել է այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների որևէ սահմանափակում, արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացումը, (եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին, որը պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով), սակայն դատարանների կողմից Օրենսգրքի վիճարկվող դրույթին տրվել է հակասահմանադրական մեկնաբանություն, որով սահմանափակվել է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքը:

Այսինքն՝ վերոշարադրյալ վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը, սակայն թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում դատարանների կողմից դրան տրվել է հակասահմանադրական մեկնաբանություն: Տվյալ պարագայում վճռաբեկ դատարանը պարտավոր էր գործն ընդունել վարույթ և համապատասխան ընթացք տալ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- թիվ ԵԴ/17804/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին տրված մեկնաբանությունը դատարանների կողմից ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 75-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Համակարգող՝

 Recoverable Signature

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169